Հարգելի՛ պարոն/տիկին,

Կից տեսեք մեր հիմնադրամի ներկայացուցիչ Էլինա Գյուրջյանի հարցումը:

Խնդրում ենք պատասխանն ուղարկել հարցման մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին Տ
եղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված 5-
օրյա ժամկետում. այլ եղանակով պատասխանն ուղարկելու անհրաժեշտություն չկա:

--

Հարգանքով՝

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Նալբանդյան 5, գրասենյակ 22ա, 0010, Երևան, ՀՀ

Հեռ. ՝+374 99 515600

էլ. փոստ՝ ***ldpf.foundation@gmail.com***

Kind regards,

Law Development and Protection Foundation

5 Nalbandyan str., office 22a, 0010 Yerevan, Republic of Armenia

Tel.: +374 99 515600

E-mail: ldpf.foundation@gmail.com

Գեղարքունիքի մարզպետարան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
15 01 2020
Մտից թիվ 01-01/37-2020

Թվային ստորագրությամբ և գաղտնագրված փաստաթուղթ
A digitally signed and encrypted PDF document

eID: ԳՅՈՒՐՋՅԱՆ ԷԼԻՆԱ (7109880796)

Անուն, ազգանուն	ԳՅՈՒՐՋՅԱՆ ԷԼԻՆԱ
Էլ. փոստի հասցե	ldpf.foundation@gmail.com
Հեռախոսահամար	093555875
Բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցե	Երևան, Նալբանդյան 5
Քաղաքացիություն	Հայաստան
Ծանուցման եղանակ	Էլ.փոստի միջոցով

Առցանց հարցում

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների դրույթներով՝

Խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. Արդյոք որպես տեղեկատվություն տնօրինող՝ Ձեր կողմից մշակվել և հրապարակվել է մարմնի կողմից տեղեկություն տալու կարգը: Մշակված լինելու դեպքում՝ ինչ եղանակով է այդ կարգը մատչելի դարձվել հանրությանը.
2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:
Խնդրում ենք հայտնել, թե կոնկրետ ինչ եղանակներով են համապատասխան տեղեկությունները մատչելի դարձվում հանրությանը:
3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող սահմանված տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները: Խնդրում ենք հայտնել, թե կոնկրետ ինչ եղանակներով են համապատասխան տեղեկությունները մատչելի դարձվում հանրությանը: Խնդրում ենք հայտնել նաև, թե արդյոք Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված բոլոր տեղեկությունները են հրապարակվել մարմնի կողմից 2017 և 2018թթ.՝ սահմանված ժամկետներում թե ոչ:

gitally signed by
ÝURJYAN ELINA
109880796
ate: 2020.01.15
:39:54 AMT

Գրանցվեց մարզպետարան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
15 01 2020 թ.
Մտից թիվ 4-0437-2020

4. Խնդրում ենք հայտնել Ձեր մարմնում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ տվյալները /նշանակված լինելու դեպքում/:
5. Խնդրում ենք հայտնել, արդյո՞ք զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների համար նախատեսված է հնարավորություն ներկա գտնվելու քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին և հետևելու դրանց ընթացքին, եթե այո, ապա նշել իրավական հիմքը:
6. Հայտնել, արդյո՞ք քաղաքացիական ծառայողների մրցութային փաստաթղթերը, մասնավորապես՝ 1. Դիմումը (Ձև 1), 2. Դիմումին (Ձև 1) կից փաստաթղթերը՝ անձնագրի լուսապատճենը, դիպլոմի լուսապատճենը, աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը, զինվորական գրքույկի լուսապատճենը, 3. Փաստաթղթերի ամբողջականության վերաբերյալ եզրակացությունը (Ձև 2), 4. քաղաքացուն մրցույթին մասնակցել թույլատրելու կամ չթույլատրելու մասին որոշումը, 5. թեստավորմանը մասնակցելու թույլտվություն ստացած քաղաքացիների ցուցակը, 6. թեստային առաջադրանքների պատասխանների գնահատված տարբերակը, 7. արձանագրությունը՝ թեստավորման ընթացքի և թեստավորման արդյունքների մասին, 8. թեստավորումը հաղթահարած քաղաքացիների ցուցակը, 9. մրցույթի թեստը, 10. թեստի ճիշտ պատասխանների ձևանմուշը, 11. մասնակիցների կողմից լրացված պատասխանների օրինակները, 12. թեստավորման արդյունքների բողոքարկման դեպքում՝ թեստավորման արդյունքների բողոքարկման վերաբերյալ տեղեկանքը, 13. թեստավորման տեսաձայնագրությունը, 14. Յուրաքանչյուր մասնակցի համար կազմված հարցազրույցի գնահատման թերթերը (Ձև 3), 15. հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ եզրակացություն (Ձև 4) 16. պաշտոնի նշանակելու վերաբերյալ իրավական ակտը, հասանելի են և տրամադրվում են հարցման դեպքում: